Անսովոր տեղ ձուազեղ եփող.

Սովորաբար ձուազեղը խոհանոցներու մէջ կ'եփեն։ Իսկ Պլոնտէն անուանի լարախաղացը՝ Նիակարայի ջրվէժին վրայ ձգուած չուանին վրայ ալ կ'եփէ. բայց այս և ասոր նման պատահարներն կարգէ դուրս են։ Իսկ մեր նոր ձուազեղ եփողն, որ դատարկաշրջիկ և խաբեբային մէկն է, ուզեր է կառքի մը մէջ եփել. և ահա նոյն կառքին կառավարը դանդատելով՝ եղածը կը պատմէ դատաւորին (՝ի Բարիզ)։ «Այս Պարոնս, կ'ըսէ, զիս վարձեց որ զինքը Մանի պատուարէն մինչև Վանտոմի մուտքը հասցընեմ. — ուսին տակն ալ մեծ կապոց մը կար։ Հեծանիք կառք ու սկսանք առաջ երթալ. վրան ութ կամ տասն վայրկեան անցաւ, սկսայ տապկած խմորեղէնի հոտ մ'առնուլ։ Զարմանք է, զրուցեցի ինքն իրենս, մէկը խմորեղէն կը տապկէ. անշուշտ կարկանդակագործ մը պիտի ըլլայ այս տեղուանքս։ Աչիս անդին նայեցայ, բայց աչքիս բան չհանդիպեցաւ. այլ հոտն նորէն հետս կը շարունակէր. դարձեալ լաւ հոտուրտացի, անտարակոյս ըսի տապկածի հոտ է, թէպէտ կարկանդակագործ աչքիս չզարկաւ, բայց տեսնեմ որ անցուորներն անհանդարտ կերպով մը կառքիս վրայ կը նային, և կին մ'ալ դարձաւ ըսաւ, կառքիդ մէջ կրակ կայ. ետս դարձայ, տեսնեմ որ բոց մը կ'ելլէ. կեցուցի ձիերը, ու կառքիս առջևի ապակիներէն սկսայ ներս դիտել. ինչ տեսնեմ. Պարոնս մէկ ձեռքը բռնած ճերմակ երկաթէ կոթով աման մը, միւս ձեռքն ալ հաստ չուան մը՝ որ ամանին տակ ջահի պէս կը վառի, ամանին մէջ ձուազեղն ալ եփելու վրայ է։ Կամաց մը վար իջայ, բացի կառքին դուռը, ու ըսի, «Ի՞նչ կ'ընես, Պարոն, մարդ ծաղրելու ելեր ես, կամ խոհանոց կարծեցիր կառքս, որ մէջը ձուազեղ եփես»։ Սա ինծի պատասխան տուաւ, թէ ինչ արգելք կայ, կառքի մէջ մարդ ինչ որ ուզէ կրնայ ընել։ — «Շատ լաւ, ըսի տեսնենք թէ ինչ իրաւամբ կառքս կ'ապականես և այրելու վտանգի մէջ կը դնես. — և յիրաւի Պարոններ՝ կառքին մէջ կոտրած հաւկիթներուն ներշանները յայտնի կեցած են, դեռ յատակն են կճեպները և այն պնակը որու մէջ զարկեր էր հաւկիթները։ — Այն միջոցին, բազմութիւն մարդկան վրայ թափեցան, որոց մէջ կար և մէկ ոստիկանութեան պաշտօնեայ մը. երբ ես անոր պատմեցի բանին ինչ ըլլալը. ինքն զՊարոնը կառքէն վար իջեցուց, և ըսաւ որ ինծի տալիքը հատուցանէ. բայց անոր քով տասուերկու փողէն աւելի բան չգտնուեցաւ։ Ամենը ըսին որ մէկու մը հետ գրաւ բռնած պիտի ըլլայ ասիկայ, ես ալ այնպէս կարծեցի. ինչ և իցէ՝ պաշտօնեայն տեսնելով որ ստակը չի բաւեր, ըսաւ որ ատենի առջև պէտք է ելլայ բանը. այն ատեն սա դէպ ինձ դառնալով. — Այ թշուառական, ըսաւ, վերջապէս զիս կը մատնես հա, » ըսաւ և երկու ուժով ապտակ ալ իջեցուց »...

Կառավարն այսպէս խօսքը վերջացընելով՝ ատենական պաշտօնեային կը հարցընէ ամբաստանելոյն, — ինչ որ պատմուեցաւ քուվրադ յայտնի վկայութեամբ, գինովի գործք է. սակայն դու գինով չէիր. դարձեալ գրաւ բռնողի գործք է, սակայն դու գրաւ ալ բռնած չէիր մէկու մը հետ. ուրեմն մեկնէ մեզի ըրածիդ պատճառը։

— Ցայտնի է պատճառն. ըսաւ ամբաստանեալն, որովհետև տուն տեղ չունիմ, անոր համար ուր որ հանդիպի հոն կը պատրաստեմ ես իմ կերակուրս։

— Ուրեմն քու սովորութիւնդ է կառքերու մէջ կերակուր պատրաստել։

— Երբոր օդն աղէկ ըլլայ՝ բացը կ'ելլամ ու հոն ծառի մը տակ երշիկ կամ ինչ որ գտնեմ կը տապկեմ. պանդոկ-

ները յաճախել չեմ սիրեր. վարժ եմ արդէն խնայութեամբ խոհակերելու. աստիէն անդիէն մէկ քանի ստակ վերայէ վրայ դնելով՝ գներ եմ ծեծած երկթէ տապակ մը, պատառաքաղ մը, պնակ մը և դաւաթ մը. ասոնցմով որչափ որ կրնամ նէ իմ պէտքս կը լեցընեմ։

— Խնայութեամբս ըսիր, ինչ կերպով ըրած ես խնայութիւնդ. ինչ է արհեստդ։

— Թուխակի վաճառականութիւն կ'ընեմ։

— Թռչունի վաճառականն ես ուրեմն։

— Միայն թուխակ կը ծախեմ, անցեալներն բերեր էի կղզիներէն քսանի մը չափ. բոլորն ալ ծախեցի, և հիմայ անոնց գնողն կ'ապրիմ. այն վաճառաբարձ նաւուն մէջ որով բերի կղզիներէն թուխակներս, խոհակերութիւն ալ ըրի. թուխակներս ալ լաւ գնով ծախեցի վասն զի խօսիլ սորվեցուցեր էի։

— Գիշերն ուր կ'անցընես։

— Գիշերներն պարտեզով կ'անցընեմ. իսկ ցորեկներն երբեմն վաճառատեղւոյն մէջ, երբեմն ոստիկանութեան դաւիթն քաշուած երկու երեք ժամ աղէկ քուն կը քաշեմ, և այն ինծի բաւական կ'ըլլայ։

— Զբսեռս որ պարապորդ մ'ես եղեր. այն ալ բաւական չէ խաբէութիւն ալ կ'ընես, կառք կը վարձես առանց ստակ ունենալու որ հատուցանես։

— Այս գործիս մէջ խաբէութիւն չկայ. որչափ որ կարելի է բաներնիս մէկ մէկու հետ յարմարցնելու ենք. ես կառավարին տալիքս կերպով մը կը հատուցանէի թէ որ զիս այսպէս չիկեցընէր։ Արդէն միտքս դրած էի որ նաւու մը մէջ մտնելով խոհակեր ըլլամ, նորէն թուխակներ և կապիկներ բերեմ. երեսուն փողի համար խարդախութիւն չեմ ըրած երբէք։ — Մտիկ ըրէ Պարոն, քսան թուխակ ու վեց ալ կապիկ, որ ինծի համար բան մ'ըսել չէ, ձեռք բերելով 500էն մինչև 600 ֆռանգ մէկէն կը վաստակիմ։ Որոշեր էի որ շուտով նաւահանգիստ երթամ, նաւ մը գտնամ։ Թէ որ կառավարն յանձն առնու՝ իրեն կը թողում որ երեսուն փողին տեղ որն որ կ'ուզէ ընտրէ, թուխակ մը կամ կապիկ մը։

Կառավարն. — Ես աւելի կ'ընտրեմ իմ երեսուն փողս։

Իսկ ատեանն թուխակի վաճառականը երեք ամսուան բանտի դատապարտեց։

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Ի ՊԷՏՍ ՈՒՍՄԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Ա. ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԾԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային դպրութեանց պատմութիւն մը՝ երկար ատենէ 'ի վեր փափաքելի էր, թէ համազգի և թէ օտար բանասէրաց։ Այս պէտքը օր օրուան վրայ աւելի զգալի կ'ըլլար, քանի որ ուսումնասիրութեան եռանդը ծաւալելով, նախնեաց մատենագրութիւնք աւելի ընդհանուր կ'ըլլային տպագրութեամբ, ու անոնց ստոյգ արժանիքն ու յարգը կը հռչակուէր, և գրուածքնին կը մեծարուէին։

Այսպիսի էական պակաս մը լեցընելու, ու ազգային դպրութեանց հարկաւոր ծառայութիւն մը ընելու դիտմամբ, ձեռք զարկինք այս երկասիրութեան. և ուսումնասէր բարեկամաց խրախուսանքը յորդորուեցանք տպագրութեամբ 'ի լոյս ընծայել։

Նմանօրինակ երկասիրութեան մը՝ մեզմէ շատ տարի առաջ ձեռք զարկեր էր Մխիթարեան ուխտիս բարեյիշատակ առաջնորդը Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս Սոմալեան։ Իր ջանասէր